ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նիզամի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նիզամի, 098 042417, nizami.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 31

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով

Ավագանին որոշում է

Հաստատել Արարատի մարզի Նիզամի համայնքի ավագանու 25 դեկտեմբեր 2020 թվականի թիվ 11 նիստի օրակարգը
1.Արարատի մարզի նիզամի համայնքի 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Արարատի մարզի Նիզամի համայնքի 2021 թվականի բյուջեի հաստատման մասին:
3.2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴՈՒՆՈՅԱՆ ՄԻՇԱ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՐՈՒԹԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նիզամի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նիզամի, 098 042417, nizami.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 32-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերի, ,, Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 9,10,11,12,13,14-րդ հոդվածներիի պահանջներով

Ավագանին որոշում է

Սահմանել Նիզամի համայնքի 2021 թվականի համար տեղական տուրքերի տեսակները և վճարների հետևյալ դրույքաչափերը
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.
ա. Հիմնական շենքերի և շինությունների համար՝
մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,
բ. սույնկետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝հիսուն հազար դրամ.
գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա. Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հազար հինգ հարյուր դրամ,
բ. Բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլկառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,
գ. Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.
3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.
5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.
6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.
7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝
ա. Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝հինգ հազար դրամ,
26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական

շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տաս հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տասներկու հազար հինգ հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝քսաներկու հազար հինգ հարյուր դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝հիսուն հազար դրամ.
բ. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տասհազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տասներկու հազար հինգ հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝քսաներկու հազար հինգ հարյուր դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝հիսուն հազար դրամ.
8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր յոթանասունհինգ դրամ՝մեկ քառակուսի մետրի համար.
9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝
ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,
բ. Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ մեկ հարյուր քսանհինգ հազար դրամ,
դ. Խաղատների համար՝ չորս հարյուր հազար դրամ,
ե. Շահումով խաղերի համար՝ հարյուրհիսուն հազար դրամ,
զ. Վիճակախաղերի համար՝ վաթսուն հազար դրամ.
10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա. Հիմնական շինությունների ներսում՝
մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝երկու հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝հինգ հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի

համար՝յոթ հազար հինգ հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝տաս հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝տասնհինգ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝քսանհինգ հազար դրամ.
բ. Ոչ հիմնական շինությունների ներսում՝
մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝մեկ հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝երկու հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝չորս հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,
500 նավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ.
11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
ա. Ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,
բ. թունդալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,
գ. Սոցիալական գովազդի համար՝զրո դրամ,
դ. Այլ արտաքին գովազդի համար՝յոթ հարյուր հիսուն դրամ,
ե. Դատարկ գովազդային վահանակների համար՝համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ հարյուր ութսուն յոթ դրամ հիսուն լումա.
զ. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ յոթանասունհինգ դրամ.
15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման,ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.
16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.
17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր

հիսուն հազար դրամ.

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝երկու միլիոն հինգ հարյուր հազ.դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝երեք միլիոն հինգ հարյուր հազ.դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝հինգ միլիոն դրամ

2. Որոշման 1-ին կետով սահմանված դրույքաչափերի համար կիռարվել է 0.5 գործակիցը:

Տեղականվճարների տեսակները և դրույքաչափերը

Սահմանել 2021 թվականի տեղական վճարների տեսակները և հետևյալ դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝երկու հազար դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երեք հազար դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝ յուրաքանչյուր ամսվա համար՝

ա) փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար -80դրամ

բ)առևտրի,այդ թվում՝ շուկաների, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝ 1քմ -25 դրամ

գ)արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1քմ-5 դրամ

դ)կրթական, մշակութային առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմամատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1քմ -2 դրամ ;

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը՝ մեկ հազար դրամ:

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ:

10/Համայնքային անասնաբուժի կողմից մատուցվող ծառայությունների վճար

ա/Կենդանիների հիվանդությունների բուժման կանխարգելման հարցերով խորհրդատվություն – 500դրամ

բ/ Ծննդօգնություն

1. Թեթև միջամտություն՝ 1000 դրամ
2. Ծանր միջամտություն՝ 5000 դրամ

գ/ Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից, / բացառությամբ ,, Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում,, պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/

մանր կենդանի՝ 100 դրամ,

խոշոր կենդանի՝ 200 դրամ

դ/Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծերի դեմ պայքար՝200 դրամ

ե/ Ախտահանություն ՝ 1 քառ. մետր ՝ 200 դրամ

զ/ Միջատազերծում / դեզինսեկցիա/ ՝ 1 քառ. մետր ՝ 100 դրամ

է/ Կրծողների ոչնչացում / դեռատիզացիա/ 1 քառ. մետր՝ 200 դրամ

ը/ Արհեստական սերմնավորում՝ 5000դրամ

թ/ Կենդանու հերձում

մանր կենդանի՝ 1000դրամ

Խոշոր կենդանի՝ 3000 դրամ

ժ/Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից, յուրաքանչյուր այցելությունը 1000 դրամ

ի/Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից

մանր կենդանի՝ 1000դրամ

Խոշոր կենդանի՝ 2000 դրամ

լ/ Կենդանիների հետսպանդային զննում

մանր կենդանի՝ 1000դրամ

Խոշոր կենդանի՝ 2000 դրամ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴՈՒՆՈՅԱՆ ՄԻՇԱ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՐՈՒԹԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նիզամի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նիզամի, 098 042417, nizami.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 33-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջով

Ավագանին որոշում է

2021թ թ-ի բյուջեն եկամուտների և ծախսերի գծով նախատեսել 36820,8 հ.Դ
2021թ-ի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամուտները հետևյալ չափերով

Հարկեր և տուրքեր	7772,5հ.դ
ա/ Գույքահարկ շենքի և շինությունների	82,1 հ. դ.
որից՝	
ֆիզիկական անձանցից	15,5 հ. դրամ
իրավաբանական անձանցից	66,6 հ. դրամ
բ/ Հողի հարկ	5191,4 հ. դրամ
որից՝	
ֆիզիկական անձանցից -	5190,0 հ.դրամ
իրավաբանական անձանցից	1,4 հ.դրա
գ/ Գույքահարկ փոխադրամիջոցների	2200,0 հ.դրամ
դ/ Տեղական տուրք	299,0 հ. դրամ
Դա/ շինությունների,շինարարության թույլտվության համար	30,0 հ. դրամ
Դբ/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար	72,0 հ. դրամ
Դգ/ Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար	72,0 հ. դրամ
Դդ/ հեղուկ վառելիքիհեղուկացված գազերի վաճառքի թույլտ. համար	100,0 հ. դրամ
ԴԵ/Ժամը 24-ից հետո աշխատելութույլտվության համար	2 5.0հ.դրա
ե/ Ընթացիք ներքին դրամաշնորհներ / դոտացիա/	27030,3հ.դ
Որից դոտացիա	27030,3դ
զ/ Վարձակության գումար	728,0հազ. Դրամ
Որից՝	
Վարձակալությամբ տրված հողերից՝	308,0 հ.դրամ
Վարձակալությամբ այլ գույքից	420,0հազ. Դրամ
է/ Աղբահանության վճար	1250,0 հազ. Դրամ
Ը/ Անասնաբուժական ծառայություն	40,0 հազ. Դրամ

3. հաստատել համայնքի վարչական բյուջեից հատկացումների հաշվին ֆինանսավորող ծախսատեսակները ըստ բյուջետային դասակարգման տնտեսագիտական հոդվածներ հետևյալ չափերով.

Ընդամենը	36820,8հազ.դրամ
01.1.1 Օրենսդիր գործադիր մարմին	14590,0 հ.դրամ
01.3.3 Ընդհանուր բնույթի ծառայություն	402.0 հազ. Դրամ
01.6.1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	650,0 հ.դրամ
04.2.1 գյուղատնտեսություն	546,0 հ,դրամ

05.1.1 աղբահանում 1240,0հ.դրամ
06.4.1 փողոցային լուսավորություն 2250,0հ. Դրամ
08.2.4 Այլ մշակույթային կազմակերպություններ 600,0 հ. Դ
09.1.1 Նախադպրոցական կրթարան 7742,8 հազ.
09.8.1 կրթություն 300,0 հ. դրամ
10.7.1սոց.հատուկ արտոնություն 1200,0 հ.դրամ
11.1.2պահուստային ֆոնդ 7300,0հ.դրամ
Հատկացումներիբաշխումըըստ առանձին հիմնարկների ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածներով
01.1.1 օրենսդրի գործադիր մարմին 14590,0 հ. դրամ
4111 աշխատավարձ 12505,0 հ. դրա
4212 էներգետիկ ծառայություն 170,0 հ. դրամ
4214կապի ծառայություն 310,0 հ. դրամ
4215 Ավտոմեքենայի ապահովագրում 33.0 հ. Դրամ
4221ներքին .գործուղում 20,0 հ. դրամ
4232 Համակարգչային ծառայություն 300,0հազ. դրամ
4234 Տեղեկատվական ծառայություն 118,0 հազ.դրամ
4241 Մասնագիտական ծառայություն 67,0 հազ. Դրամ
4252 Մեքենաների և սարքվորումների ընթացիկնորոգ. և պահպանում 430,0 հազ.
4261գրասենյակ նյութ 150,0 հ. դրամ
4264 տրանսպորտ նյութ 450,0հ.դրամ
4267 Կենցաղային և հանրային սննդի նյութ 50,0 հ. Դրամ
4823 պարտադիր վճար 20,0 հ. դրամ
01.3.3
4232 համակարգչային ծառայություն 402,0 հազ. Դրամ
01.6.1 ընդհանուր բնույթի հանրային ծառայության 650,0հ.
4241 մասնագիտական ծառայություն 500,0 հ.դ
4819նվիրատվությունայլշահույթ չհետապնդող կազմակերպության 150,0 հ. դրամ
04.2.1 Գյուղատնտեսություն 546,0 հազ. դրամ
4111 աշխատավարձ 516,0 հազ.դրամ
4262 գյուղատնտեսական ապրանքներ 30,0 հազ.դրամ
05.1.1 4213 աղբահանում 1240,0 հ. դրամ
06.4.1 փողոցային լուսավորություն 2250,0հազ.դրամ
4251 ընթացիկ վերանորոգում 950,0 հազ.դրամ
4212 էներգետիկ ծառայություն 500,0 հազ.դրամ
4269 Հատուկ Նպատակային նյութ 800,0 հազ.դրամ
08.2.4 Այլ մշակույթային կազմակերպություն 600,0 հ.դ
4239 Ընդհանուր բնույթի այլ ծառայություն 150,0 հազ. Դրամ
4269 Հատուկ նպատակային այլնյութ 350,0հ. Դ
4729 Այլ նպաստ 100,0 հազ. դրամ
09.1.1 Նախադպրոցական կրթարան 9378,7,0 հազ. Դրամ
4111 աշխատավարձ 2600.0հազ.Դրամ
4212 Էներգետիկ ծառայություն 180.0 հազ դրամ
4261 գրասենյակային նյութ 30, 0 հազ. Դրամ
4267 Կենցաղային և հանրային սննդի նյութ 120.0 հազ. Դրամ
4251 Ընթացիկ վերանորոգում 550.0 հազ դրամ
4269 հատուկնպատակայինայլնյութ 70,0 հազդ. դրամ
4511 Սուբբենցիա ոչ ֆինանսական պետական կազմակերպության 5828,7 հազ. դրամ
09.8.1 կրթություն 300,0 հ.դրամ
4637 Ընթացիկ դրամաշնորհներ 300.0 հ. Դ

10.7.1	Սոց հատուկ արտոնություն	1200,0հ.դ
4726	հողարկավորության նպաստ	450,0 հ. դրամ
4729	այլ նպաստներ	750,0 հ.
11.1	պահուստային ֆոնդ	7300,0հ. դրամ
4891	պահուստային միջոց դրամ	7300,0հ.

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴՈՒՆՈՅԱՆ ՄԻՇԱ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՐՈՒԹԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԻԶԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նիզամի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նիզամի, 098 042417, nizami.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 34-Ն

2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջով

Ավագանին որոշեց

2020 Թվականի բյուջեի ֆոնդային մասում՝ եկամուտների մասով՝ 8191000,0/ ութ միլիոն հարյուր իննսունմեկ հազար/ՀՀ դրամ ավելացնել 38.01/ պետական բյուջեից կապիտալ ծախս/, իսկ ծախսային մասով ավելացնել 04.5.1 / ասֆալտաբետոնային/ 5113 հոդվածին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴՈՒՆՈՅԱՆ ՄԻՇԱ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՐՈՒԹԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ